

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի,
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի կամրագրատան մէջ:

() տարաբաղադրակի գիծում են ուղղակի
Тифлисс. Редакция „Миръ“

ՄԵՆԿ

Կամրագրատանը բաց է առևտուրն 10—2 ժամ
(Կացի կերակրի և տոն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն շաբաթով:

Հայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Մենք թէ Լիմիտները—Ներքին տնտեսական թիֆլիսի Նախնական դատարանի վերջին, Նախնական ներքինից, Ներքին լուրերը—Արտաքին տնտեսական, Գոյական Մարդման համակարգ—Մշակութիւն հեռագրիչները—Հայտարարութիւնները—Բանասիրական, Խնամքը:

ՄԵՆԲ ԹԵ ԷԶՄԻԱԾԻՆԸ

Լորէ Այսպուրականից լսեցինք ձիւ սովամահ հայերի, մենք շտապեցինք նրան հաղորդել մեր ընթերցողներին և մեր ձայնը կայծակի արագութեամբ հասաւ ամեն տեղ: Մի քանի օրեր չանցած խմբագրութիւնը սկսեցին հեղեղել նուիրատուութիւնները, հայրենասիրութեան այդ առատ տուրքերը: Իւրաքանչիւր հայի կուրծքը սկսեց կարծես, աւելի ազատ շնչել, քան թէ երբէք, երբ միմեանցից հազար վերստ հեռու գտնվող մեր զգայունները ապացուցեցին, թէ ամեն շրջանի, ամեն պայմանների մէջ նոցա սիրտը դեռ զգայուն է Հայաստանի շահերին:

Յիրաւի այս ուրախալի երես-

ւոյթը կարելի է առաջինը համարել հէնց այն օրից, քանի որ մենք յիշում ենք ժամանակակից հայերին, քանի որ ամենքի բերանից միայն նախատինք և արհամարհանք ենք լսում հայի դէմ: Այսպիսի եղբայրսիրութեան զօրեղ ցոյցերից յետոյ, իւրաքանչիւր հայը բարոյապէս էլ իրան վարձատրված կարող է համարել, համոզվելով իրօք որ իր ազգայինների մէջ դեռ չէ կորել մարդասիրութիւն, եղբայրսիրութիւն և հայրենասիրութիւն, որով պարծենում են ամեն լաւ ազգերը, վասն որոյ ջերմ սրտով մենք ողջունում ենք բոլոր հայերին:

Բայց երբ Լիւրատի ծոցից հնչեց հառաչանք սովամահ հայերի, ո՞վ էր պարտական առաջինը լսել Լորէ Այսպուրականում սիրվում էին սովից հարկւր դիակներ, ու՞մ էր պարտական առաջինը տեսնել: Լորէ մի ամիս առաջ դեռ նոր էր լսվում թէ սովը տիրում է Հայաստանը, ո՞վ էր պարտական օգնութեան հրաւիրել: Լորէ

առաջ, վրացի, գերմանացի, պարսիկ և հրէայ համակրելով հայաստանցիների վիճակին, սկսեցին նուիրատուութիւններին մասնակցել, ո՞վ էր պարտական առաջինը լուսման գցել, ո՞վ էր պարտական առաջնորդ դառնալ և եղբայրսիրութեան օրինակ լինել... մեք, թէ Լիւրատի մարդիկ, դուք ասեցէք...

Բայց ամբողջ ժամանակ Լիւրատի միտքը լռեց, որովհետեւ նա իր հաշիւներն ուներ, նա միայն իր համար էր մտածում:

Լա հա հա երբ մեր հրաւերները բոլորին շարժեցին, բոլորի սիրտը յուզեցին, երբ ամեն տեղ ուղեւորվելով, հայր օգնութեան շտապեց,—այդ ժամանակ միայն Լիւրատի միտքը սկսեց ամեն տեղ պատուէրներ և ժապաւինած գրքեր ուղարկել, որ քահանաները տուներին շրջելով սովեւոց համար նուիրատուութիւններ հաւաքեն: Եթէ իսկապէս սովեւոց համար է Լիւրատի այդ նոր կարողողութիւնը, ինչի ուրեմն նա չէ ցանկանում որ հանգանա-

կութիւնը բաց, ամենքին յայտնի, տպագրական ճանապարհով, խորհրդարանական ձեռքով անցնի սովեւոցի փորը... Ինչ է նա ճշգրտում անպատճառ իրան մօտ տանել այդ փողը, երբ Լիւրատի միտքն այժմ մնացել են Այսպուրատի գաղթականների համար հաւաքած անյայտ 17 հազար ռուբլիները և շատ այդպիսի փողեր...

Ինչի յայտնի, աշկարայ ճանապարհը թողած՝ Լիւրատի այդ ճանապարհով է ուղղում գործ բռնել...

Գր. Նիկողոսեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՆԱԽՆԱԿԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

Ներկայացվել է մարտի 17-ին, երկուշաբթի 4½ ժամին ԹԻՖԼԻՍԻ Նախնական դատարանը կեղծ թղթադրամներ շինելու, նրանց տարածելու և փոխադրող Նիկոլայ Լեոնտիևի ըստ անկողնու գործի մասին հետևեալ վճիռը

սպիտակ մակերևութով, Լալան սարսափով նայում էր նրա վրա: Քրոջ ցաւալի պատմութիւնը նրա բոլորեցված երևակայութեան մէջ իրականութիւն ստացաւ: Նա այժմ տեսնում էր գերեզմանի փոխարէն մի քրդի սև չադր, լեռների մի խուլ ձորի մէջ կազմված, Նրա մէջ նստած էր Սոնան զարհուրելի-սառնաստ դէմքով: Նա իր ձեռքում բռնած ուներ թղթի բաժակը, մտնեցնում էր չորթնաքին և յետ էր տանում: Ներկայումս նա մաքառում էր կեանքի և մահուան դէմ: Այս, մտնեցնում էր չադրին քուրդ աղնուկաւոր՝ Սոնայի յափշտակողը: Սոնան տեսաւ նրան, կրկին մտնեցրեց իր չորթնաքին թուխալից բաժակը, խաչակրեց և խըմաւ...

Տեսարանը փոխվեցաւ: Լալայի աչքի առջև դրած էր դարձեալ Սոնայի սպիտակ գերեզմանը: Այժմ նրա երևակայութեան մէջ պատկերացան երկու ուրիշ անձինք. մէկը, Թոմաս Էֆենդիին իր խորամանկ և գաղտնի դէմքով, միւսը, քուրդ ճաթի թահաբէկը իր վայրենի և դադաւային դէմքով: Նա բոլոր մարմնով զոգացաւ: Արդեօք դիմէր, արդեօք յայտնի էր նրան, թէ ինչ փոս են փորում այդ երկու մարդիկ իր համար—Նա ոչինչ չէր գիտէր. նա միայն զգում էր...

—Չէ, բացականչեց նա ստակալի ձայնով.—ես Սոնայի մօտ չեմ գնա... ես վախենում եմ գերեզմանից...

Այդ միջոցին մի ձեռք հեղիկ կերպով դրվեցաւ նրա ուսի վրա, և լսելի եղաւ նրա անունը.

—Լալայ... Ներքինից անցնում էր լսեց: —Լալայ... կրկնվեցաւ ձայնը.—ես չեմ թողնի, որ դու Սոնայի մօտ գնաս... ես կաշատեմ քեզ... Նա յետ նայեց, տեսաւ, իր մօտ կանգնած էր Վարդանը:

—Հա, ազատի ինձ... խօսեց նա, դեռ առանց սթափվելու իր առաջին խռովութիւնից.—ազատի, անո՛ր մի ուրիշ երկիր, այստեղ վատ է... այստեղ շատ վատ է...

Ի Ե Ն Թ Ը

ԱՐԿԱՄԱՆԻՆԻ ՎԵՐՋԻՆ ԹԻՖԼԻՍԻ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՐԸ

ԺԸ:

Օրայի մէջ իւրային ճրագը դեռ վառվում էր, տարածելով իր շուրջը աղօտ լոյս: Վարդանը երկար մնաց անբուռ, Այն գիշերվայ խոսակցութիւնները զրգռել էին նրա ուղեղը: Նա յիշում էր ձեռնուռն օրերի սառնասրտութիւնը դէպի իր և նորից հիւրի զբարոյները: Նա զարմանում էր, որ այնպէս կազմածանքով էին նայում այդ օգնից և ազնիւ երիտասարդի վրա: Միւս կողմից, նրա սիրտը խռովում էր երկուսը իր, որոնք շատ չէին տարբերվում միմեանցից իրանց բնաւորութիւնով: —Մէկը, հարստանարված գիւղացու սերը, միւսը, Լալայի սերը, որ նորից բարոյական հարստանարութեան ենթակայ էր...

Նա աչք ձգեց, տեսաւ, որ նորից երիտասարդը քնած էր: Ճրագի աղօտ լուսով նկարվում էր նրա գունաթափ և մաշված դէմքը, որի սուր գծերի մէջ արտայայտվում էր մի հաստատուն բնաւորութիւն, Նրա քունը անհանգիստ էր: Տեսնելով զառանցութեան մէջ տանջվում էր նա: Երբեմն նրա ցամաք չորթնաքին շարժվում էին, և լսելի էին լինում խրատ, կցկուրտ խօսքեր, ֆրանսիերէն և հայերէն լեզուով:

Եղբայրներ... հասաւ ժամը... ձեր արեւնով պիտի գնէք... ձեր ազատութիւնը... ներկան... ապագան... մեզ է պատկանում... ցոյց տուեցէք... քաջեր... որ թուրք... երկաթի դաւադան... բոլորովին չէ մահացել... ձեր մէջ կեանքը... և... ա-

զատութեան... զգացմունքը... Եղբայր... և... սրի մէջ... պիտի գտնենք... մեր... փրկութիւնը... Դէպ առանձ... քաջեր...

—Խեղճ, ասաց Վարդանը զուրկ շարժելով.— իրիկ շատ գրքեր է կարդացել... Հայ գիւղացու ողորմելի օղայի մէջ իրան փարիզի բարբիկադների վրա է երեսկայում և ճառ է խօսում... խեղճ...

Այդ միջոցին Վարդանի ականջին զարկեց երգի մեղմիկ ձայն, որ տխուր հնչիւններով լսելի էր լինում գիշերային լուսնի տակ: Մէջ, Նա ճանաչեց նազելի ձայնը և դուրս եկաւ օղայից:

Երբեմն իսպառի տանը մի երկրորդ արարած ևս այն գիշեր արթնում էր, նա իր անկողնի մէջ անհանգիստ կերպով այս կողմ և այն կողմ էր շուռ գալիս: Նրա շուրջը, սրահի մէջ, այր և կին բոլոր ծանր քնով խռովում էին: Մշակի յոգնած և վատապաշտ անդամները գիշերվայ արթնութիւն չէր գիտէին:

Միայն Լալան հանգիստ լինել կարող չէր: Նա հանգիստ և կամայ դուրս եկաւ սրահից: Կատուն այնպէս զգոյշ, այնպէս հեղիկ կերպով չէր կարող փրկել իր քայլերը, որպէս այդ մանկահասակ աղջկի, անցնելով սրահի միջին, յայտնվեցաւ բակում: Ծունը նրան հեռուից տեսնելով, սկսեց հաչել: Վարդան, չնայած նա հաղիւ լսելի ձայնով, Ծունը լռեց: Խաղաղ զարնանային գիշեր էր: Օգի զովութիւնը մրսեցնելու չափ ցուրտ էր, բայց նա աւելի կազդուրեց օրիորդին, աւելի հովաքեց նրա բոլորեցված դէմքը: Նա անցաւ դէպի պարտէզը և մտաւ ծառերի մէջ: Այստեղ խաւարը աւելի թանձր էր, այստեղ նրան չէին տեսնի: Նա նստեց թաւիկայ խոտերի վրա, և ձեռք ծնոտին դրած սկսեց նայել դէպի երկինքը: Լուսինը չէր երևում, օդոտեղ էր նա, մտածում էր օրիորդը, երբի, քնած էր: Նրա շուրջը փրկում էր խորին լուսնիւն, Դաւանի վրա մի տեղի անցած չէր շարժվում: Բոլոր հանգստանում էին, թէ քամին, որ շատ անգամ օրօրում էր այդ ծառերի ճիւղերը, և թէ գետը, որի աղմկալի հոսանքի ձայնը նա միշտ լսել էր գիշերային լուսնի ժամանակ, Բոլորը

հանգստանում էին, միայն ինքը անհանգիստ էր, միայն ինքը արթնում էր:

Նա ինչեղ մի երգ, որ սովորել էր պառաւ տառից, և բոլորովին ակամայ կերպով դուրս թռան նրա սեղմված չորթնաքին միջին սիրելի երգի անուշ հնչիւնները:

Երբեմն է լուսնեակը երկնի խորքում, Երբեմն է թռչնակը իր փափուկ բնույթ, Երբեմն է քամին, տեղեր չէ շարժվում, Երբեմն է գետը, ձայնը չէ լսվում:

Վարդան, ինչու ևս քնել չեմ կարում, Ռեզուս եմ քնել, աչքս չէ փակվում:

Վարդան, այս ինչ է, որ ինձ տանջում է, Վալս ինչ կրակ է, որ սիրտս այրում է:

Վերջանելով երգը, նա զուրկ ցած թողեց ծնկերի վրա, և երկու ձեռքով բռնելով իր բոլորեցված երես սկսեց դառն կերպով լաց լինել: Արտասուքը հեղեղի նման թափվում էր նրա սիրուն աչքերից: Ինչու էր լաց լինում.—Ինչու էլ չէր պիտի: Արդեօք նրա համար, որ միտք բերեց իր սիրելի մօրը, որի նա տեսել, որի բերանից մի անուշ խօսք անցած չէր լսել: Լիւրատի էր լաց լինում: Այդ ինչ անբացատրելի զգացմունք էր, որ խռովում էր նրա կուսական անմոլ սիրտը:

Բայց արտասուքը փոքր ինչ հանգստացրեց նրան: Նա զուրկ վեր բարձրացրեց, նայեց իր շուրջը, և նրա աչքը ընկաւ չորս կաղամախների հովանու տակ հանգստացած գերեզմանի վրա, որ շատ հեռու չէր իր նստած տեղից: Դա իր քրոջ Սոնայի գերեզմանն էր, որին թէն չէր տեսել, բայց նրա ցաւալի պատմութիւնը հազար անգամ լսել էր: Հանգիստեալ նահատակի նշանակութիւն էր ստացել Լալայի ամբողջ մէջ, և նրա գերեզմանի մօտ շատ անգամ բերում էին հիւանդներ: Երբեմնի հօր պատուիրելով, նրա վրա ամեն կերակուցման օրերի վառվում էր մի իւրային ճրագ: Այս գիշեր ճրագը տակաւին ծխում էր, պղպում էր և լուսաւորում էր գերեզմանի գաճով պատած

յայտնեց: Յանցաւորներ պօրուչիկ Նիկիտ Զանիւրեզովին, Ար. Խէչատուրովին, Զագարեւ-զովին, Արծաթպանանցին, Զուգանովին, Ամիր-խանովին, Աղաջան Բաղաւովին և Վ. Արուսթի-նովին զրկել բոլոր իրաւունքներէն և ենթադրե-կէ տաժանակիր աշխատանքներին 10 տարի ժամանակով և յետոյ բնակեցնել Սիրիւում: Կեն. Վարդանովին ենթարկել տաժանակիր աշխատանքներին 10 տարի: Ի. Մուրադովին բնակեցնել Սիրիւում: Գէոր. Գիւրարովին են-թարկել զործարանական աշխատանքներին 6 տարի ժամանակով: Գէոր. Միրանովին և Զախ. Նասիրիզովին կայանաւորել ուղղող րօտաներին 15 1 տարի ժամանակով: Իս. Բա-ղաւանցին ուղղող րօտաներին մէջ կայանաւորել 3 տարի ժամանակով: Գէոր. Գամարովին ենթարկել տաժանակիր աշխատանքներին 8 տարի ժամանակով, իսկ յետոյ բնակեցնել Սի-րիւում: Արէլ չափման հմուտներին ենթարկել տաժանակիր աշխատանքներին 4 տարի ժամա-նակով, իսկ յետոյ բնակեցնել Սիրիւում: Իշ-խան Լուկա Անդրոնիկովին զրկել իրաւունք-ներէն և 2 ամիս կայանաւորել բանտի մէջ: Մե-ղադրված՝ Բակալովին, Ս. Կալանտարովին, Գիւ-ջանովին, Բախիւարայցիովին, Տէր-Սարգիսո-վին, Լազարեովին, Նկատերինա Պոպովին, Ար. չափման հմուտներին, Յիսկարաւիկին, Նա. Գուր-գալովին, Կանսնիչին, Պ. Կարայեովին, Կլիմի-կաձէին և Ի. Բէժանովին արդարացին և միջնորդել Գիւրարովի և Ար. չափման հմուտ-վի պատժի թեթեւացնելու մասին:

ՆԱԽԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

25 փետրվարի

Փոթորկալից էին ամայոյ 8-ի, 14-ի և 18-ի քա-ղաքային խորհրդի նիստերը: Եւ չեմ կարող այդ նիստերի մանրամասնութիւն-ները հաղորդել ձեր ընթերցողներին, այդ մասին պէտք էր որ լինէի կամ սղա գիր և կամ արա-գագիր. այդ յատկութիւններէն զուրկ լինելով՝ հաղորդում եմ նիստերի մէջ վիճարանութեան զը-րած խնդիրներէ ձեական և վերջնական հանգաման-քները: Գիշալ նիստերում քննութեան առարկայ եղան

Երկրասարդը նստեց նրա մօտ: Նրանք մի քանի րոպէ մնացին լուռ. խօսք չէին գտնում խօսելու: Լալան տակալին խորին խալի-տակութեան մէջ, մտաբերում էր այն սոսկալի տեսիլքը, որ այնքան վախեցրեց նրան: Վարդանը մտածում էր, թէ ինչու այդ անմեղ, անփորձ աղ-ջիկը աղաչում էր հեռացնել իրան հայրենի աշ-խարհից, ուր նա այնքան սիրված էր ընտանիքից, ինչու ցանկանում էր նա մի ուրիշ, հեռու երկրի գնալ: Միթէ սէրը, սիրած տղամարդի սէրը ձգել էր նրան այս ցնորքների մէջ: Բայց սէրը դեռ ևս նրա համար մի անորոշ և մթին զգացմունք էր: Երկրասարդը հարցրեց. — Ի՞նչով է վատ այդ երկրի: — Վատ է, շատ վատ է, պատասխանեց նա տխրութեամբ լի ձայնով.— տեսնում ես այդ գե-րեզմանը: Նա ցոյց տուեց Սմայի գերեզմանը: — Գիտես, ով է դրած նրա մէջ: — Գիտեմ... — Գիտես, ինչպէս մեռաւ նա: — Գիտեմ... — Եւ չեմ ուզում Սմայի պէս մեռնել, վա-րդան, ես վախենում եմ թոյնից... վախենում եմ գերեզմանից... Երկին խեղճ աղջկայ աչքերը ցլկեցան արտա-սուգով: — Ի՞նչու ես կարծում, Լալայ, թէ դու էլ Սո-նայի պէս բախտ կունենաս, հարցրեց երկրասար-դը նրա ձեռքի բռնելով.— Այդ մի ցաւալի զէպք էր, որ ամեն աղջկայ հետ չէ պատահում: Ի՞նչու ես դու մտածում, որ մի և նոյնը կարող է և քեզ պատահել: — Ես այդ միշտ մտածում եմ... միշտ սպասում եմ... հէնց այն օրից, երբ սկսեցի հասկանալ թէ ինչու ես ինձ տղայի հագուստով պահում... Այս-տեղ աղջիկ լինելը Աստուծոյ պատիժն է... մի յանցանք է... մանաւանդ սիրուն աղջիկ լինելը... Լալի, վարդան, ես մի ծանօթ աղջիկ ունեի, ո-րին շատ սիրում էի, նա շատ լաւ աղջիկ էր և

քաղաքի մաքրութեան և բնակիչներին հաց տալու խնդիրները: Քաղաքի ճանապարհները, փողոցները, տալարները, կամուրջները, հրապարակները և ջը-րանցքները մաքուր և չէն պահելու համար քա-ղաքային խորհուրդը (Գումա) իր նախորդ նիստե-րում որոշել է հարկաւոր եղած ծախսը վերց-նել քաղաքային արկղից: Այս պատճառով, պ. քաղաքագլուխը առաջարկում էր, ամայոյ 8-ին, խորհրդին որ սա նշանակէ մի գումար, ո-րով հնար լինի մաքրել տալ քաղաքի այն տեղերը, որտեղերից վարչակիչ հիւանդութիւններ յառաջ գրուեց երկրից կայ: Բայց որովհետեւ չափալի տե-ղերի ոչ տարածութեան չափը, ոչ մաքրելու հա-րկաւոր եղած գումարի նախահաշիւը չէր յայտնի, ուստի խորհուրդը վճռեց յետաձգել այդ առա-ջարկութիւնը երկու չարաք ժամանակով, որպէս զի գործադիր վարչութիւնը (ԿԱՐԱՅ) պատրաստէ նախահաշիւը և զեկուցանէ խորհրդին, համաձայն առաջարկութեան իրաւասու պ. պ. Վար. և Վաս. Եղիազարեաններին: Հիմա, որ հայն սկսվել է, միւս կողմից էլ ա-ռատ անձրեւներ են զալլ, զիստաւ փողոցներից անգամ անցողաբար չափազանց դժուարացած լինելով, յուսով ենք որ ք. վարչութիւնը չի ուշա-ցնի իր զեկուցումը, ի նկատի առնելով քաղաքի թաղերի աննկարագիր և աղբանոցները ևս, որ տա-քութեան սկսվելու հետ, կարող են զարհուրելի կերպիւ թունաւորել օդը և հիւանդութիւններ ա-ռաջ բերել: Երկրորդ խնդիրը կայանում էր նորանում, որ պ. քաղաքագլուխը առաջարկում էր փոխել նա-խորդ նիստերում կայացած հետեւալ վճիռները: 1) Այն, որի զօրութիւնով ք. վարչութիւնը պէտք էր առանձին յանձնաժողովի ձեռքով ցո-րեն կամ ալիւր բերել տար և խալվարը 70 րուբ-լով բաժանէր հացթիւխներին, որպէս զի սղա պարտաւոր լինէին թխած հացի փորը (12 ֆուն-տը) ծախելու քաղաքացիներին 60 կոպէկով և նոյն գնով տալ գիւղացիներին ևս, իւրաքանչիւր զիւղացու 6 ֆունտ միայն: Եթէ չեմ սխալվում, այս վճիռը կայացել էր պ. քաղաքագլխին առաջարկութեան համաձայն, բայց այն ժամանակ, երբ կարելի էր տակալն ցորենի և ալիւրի խալվարը գնել 70—75 րուբլով, փոքր միջոցից յետոյ ցորենի և ալիւրի խալվարը բարձրանալով մինչ 80—100 րուբլի, քաղաքը կարող էր, այդ վճիռն համաձայն, օրական 150—200 րուբլ մնասի երկթարկվել: Ուստի հա-կառակ օրէնքի, բայց յօգուտ քաղաքի, վերոյիշեալ վճիռը փոխվեց սպալելու: 2) Ինչ գնով որ քաղաքային վարչութեան կողմից նշանակած յանձնաժողովը կարողանայ

մեր զրացել էր: Մայրը ամեն օր ծնծում էր նրան, թէ ինչու նա սիրուն ծնվեց, թէ ինչու նա օրը-ստօրէ գեղեցկանում էր: Գիտեմ, ասում էր մայրը, մեր զիւնին մի պատահաւ կը բերես... Երազի-սը լաց էր լինում.— այդպէս էր նրա անունը: Մայրը չէր թողնում Երազիին, որ նա իր երեսը լուանայ, որ մաղերը սանդղէ և միշտ պատառ-տած հագուստով էր պահում: Վերջը քրդերը տա-րան Երազիին: Քանի որ առաջ ես տեսայ նրան, ասի, որքան տղեղացել էր... այժմ նա սիրուն էր... Ասում էր, Ստեփանիկ, շատ վատ է քրդի կին լինելը... և լաց էր լինում... Լալան ինքն էլ սկսեց լաց լինել: Երբ մի փոքր հանգստացաւ, հարցրեց. — Վարդան, դու ինձ պատեղից կը տանես, այնպէս չէ: — Կը տանեմ, միայն կաց: Դու տար, կուզես, հէնց հիմա տար, ես կը գամ քեզ հետ, ուր որ տանելու լինես: — Մի քանի օր սպասիր, Լալայ, մինչև հօդը հետ կը խօսեմ: Այսպէս նստած, նրանք երկար և երկար խօ-սում էին գիշերային մթութեան մէջ, մինչև տըխ-րութեան զգացմունքը տեղի տուեց սիրոյ բերի-րութեան զգացմունքին: Դ. Բ.

ձեռք բերել ցորենը կամ ալիւրը, նոյն գնով տալ հացթիւխներին և թխած հացի գինը աւելացնել: Բ.) Որովհետեւ քաղ. վարչութիւնը չէ կարող այնքան ցորեն և ալիւր ձեռք բերել, որ կարողա-նայ լրացնել և գիւղացիների պիտոյքը, ուստի զոցա տրուելից հայի քանակութեան վերաբերալ վճիռը թողնել անփոփոխ: 2) Վերոյիշեալ փոփոխութիւնների հետ փոխ-վեցան մի քանի վճիռներ ինքնին (ևս, ա) ան-կարծաղբիլ մնաց այն վճիռը, որով քաղաքային խորհուրդը պարտաւորվում էր առանձին յանձնա-ժողովի հսկողութեան ներքոյ բանալ 4 հացարան աղբատ հայերի համար և, կարծեմ, 6 հացարան աղբատ թուրքերի համար, որտեղից աղբատու-թեան տոնակ ստացած մարդիկ պէտք է չէին գնով թխած հաց գնել իրանց համար յատկա-ցած խանութներից: Բ.) Անգործադրելի մնաց այն օրոշումն, որ թէ թուրք-հացթիւխները չը համաձայնվէին վարչութեան նշանակած գնով թը-լած հաց տալ ք. քաղաքի աղբատներին, պէտք էր հայերն իրանց աղբատներին համար առանձին հա-ցարան բանային, իսկ թուրքերն արդէն օգնում էին իրանց աղբատներին նորանում որ՝ մինչև ի-րանց հաւատակցներին չը բաւականացնէին թը-լած հացով, ուշադրութիւն չէին դարձնում հայ աղբատների աղաչական ձայնին: Այսպիսով քաղաքի աղբատները ընդհանրա-պէս և ի մասնաւոր, հայ աղբատները, ոչինչ չը չափեցան քաղաքային խորհրդի և վարչութեան վերոյիշեալ օրոշումները և ստիպվեցան հարուստ-ներին հետ հաւատարմ գնով հաց գնել. այն զանազա-նութիւնով, որ հարուստ և աղքատներին ունեցող մարդիկ մի և նոյն գնով աւելի լաւ թխած ու մաքուր հաց էին ուտում, քան թէ աղբատնե-րը: Եթէ թուրք և հայ աղբատները մի օգուտ ստացան այս նեղ հանգամանքներում, այդ էլ կա-յանում էր նորանում, որ թէ նախագագիտի և թէ քաղաքագլխի կողմից մասնաւոր մարդիկ նշա-նակվելով, կամաւոր նուէրներ ժողովներին, որից, ինչպէս լսել եմ, հոյացաւ մօտ 2700 րուբլ, և այդ գումարը՝ նախագագիտից նշանակված մաս-նաժողովի ձեռքով բաժանվեց հայ և թուրք աղ-բատներին: Քաղաքային վարչութեան և մասնա-ւոր խորհրդի կարելի է չնորհակալութիւն յայտնել այն առանձին փոփոխութեան մասին, որ ալիւր բերելու համար նշանակած յանձնաժողովի նկատմամբ եղաւ: Նախկին յանձնաժողովը չարարացնելով քաղ. խորհրդի յոյսերը և պաշտօնագրով լինելով, ընկաւ քննութեան տակ և դրա տեղը նշանակվեց մի առանձին յանձնաժողով, որը կարճ միջոցում լըց-

րեց քաղաքը ցորենով և ալիւրով, ու սորանով կտրեց հացի գինը: Նախկին յանձնաժողովի նախագահն էր պ. քաղաքագլուխը. քննիչ-յանձնաժողովը իր զբաւո-րեկուցման մէջ մեղադրեց յանձնաժողովի անգամ Միրզա Հիւսէյնին, որը յանձնաժողովի հաւա-տարմութիւնը ի չարն գործ գնելով, իր մօտ պա-հել էր երկար միջոց յանձնաժողովից ստացած փողերը և ժողովի նախագահին շարունակաբար հաւատացնելիւ է եղել, թէ թիֆլիսից այդ գումարով ալիւր է գնել տուել իր գործակատարի ձեռքով և թէ այսօր էլուց կը ստացով. այդպիսով քաղաքի փողերը պահել էր իր մօտ երկար միջոց և առ-հետաւան կերպով թանգութիւն ձգել քաղաքի մէջ, որպէս զի իր ամբարի ցորենը բարձր գնով վաճառէ և, ինչպէս ասում են, կարողացել էր հասնել իր նպատակին: Քննիչ-յանձնաժողովը մեղադրում էր զորա նա պ. քաղաքագլխին ևս, իր յանձնաժողովի նա-խագահի, որը չափազանց հաւատ ընծայելով իր ստորագրեալին, արհեստական թանգութեան ա-ռիթ էր տուել. ուստի քննիչ-յանձնաժողովը, յայտնելով իր գրաւով կարծիքը ք. վարչութեան, սա իր կողմից յայտնելով խորհրդին, վերջին վճռեց երեք օրվայ ընթացքում բացատրութիւն պահանջել յիշեալ անձերից: Այս նպատակով ք. խորհրդարանում երկու փոթորկալից բայց ըստ էութեան անօգուտ՝ նի-ստեր եղան: Հարցը նորանում էր, թէ ով պէտք է քաղա-քագլխի փոխարէն նախագահէ, քանի որ պ. քաղաքագլուխը մի և նոյն ժամանակ իրեն նա-խագահ յանձնաժողովի և ինքնակալութեան է պատա-խանաւորութեան: Երկար ու ձանձրալի վիճառա-նութիւններից յետոյ վճռվեց, որ նախագահէ ու թէ այն իրաւասուն, որ ամենից աւելի ընտրական ձայն է ստացել, որովհետեւ ոչ պետական լեզուն և ոչ էլ օրէնքն է իմանում, այլ նախագահէ վարչութեան նոյն անգամը, որ համարվում է քա-ղաքագլխի տեղակալ. դա պ. Վ. Պապայանեանն էր: Այս վերջինը, որ իրկու անգամ նախագահեց երկար վիճարանութիւններից յետոյ, կարողաց վարչութեան զեկուցումն ու օրոշումն, որ կայա-ցել էր քննիչ-յանձնաժողովի տեղեկագրի վրա և երեքսու որ վարչութեան կարծիքով ևս չէ. Մ. Հիւսէյնը պէտք է վճարէ քաղաքի կրած վնասը հացի թանգանալու մասին, և զրկվելու է իրաւա-սական ձայնից: Խորհուրդը լսելով վարչութեան վճիռ տրամաբարութիւնը, կամեցաւ իմանալ թէ մեղադրուածներն ինչով են արդարանում քննիչ-յանձնաժողովի տեղեկագրի առջեւ:— Պ. քաղաքա-գլուխը իր զբաւոյր երկար բացատրութեան մէջ

— Կարելի էր, պատասխանեց վարդանը մտա-լուրդութեան մէջ,—բայց յետոյ ուր գնաց: — Յետոյ մօտեցաւ նա մի խումբ գիւղացիներին, որ նոր էին դուրս եկել ժամից, և հաւաքված ե-կիղեղուն դրանք, խօսում էին հարկերի բաժան-ման վրա: Նա խօսակցութեան մէջ մտաւ և սկը-սեց բացատրել գիւղացիներին, թէ նրանք վճա-րում են կառավարութեանը աւելի քան թէ պէտք է վճարել, բայց իրանց հասարակական գործերի մասին ամենին հոգ չեն տանում: Խօսում էր աղջկանց և տղայոց զարկոցների մասին, որոնցից զուրկ են մեր գիւղացիները. խօսում էր ինչ-որ ընկերութեան մասին, որ կարող էր բարւոյն գիւղացու տնտեսական վիճակը. խօսում էր ինչ որ հասարակաց դրամարկի մասին, որտեղից գիւ-ղացին կարող էր չէան տոկոսով փող վեր առ-նել կարտոսութեան ժամանակ,—ո՞վ է իմանում, հաղաք ու մէկ այս տեսակ բաների վրա եւ խօ-սում: — Ի՞նչ պատասխանեցին գիւղացիները, հարց-րեց վարդանը հետաքրքրվելով: — Գիւղացիները ծիծաղեցին, հաճացին և ոչինչ չը պատասխանեցին: Մէկը նրանցից ասաց իր ընկերին այդ մարդը խնիթ է: — Փառք Աստուծոյ, խնիթը մեռնալ ես չեմ ե-ղել, ստաց վարդանը ծիծաղելով.— ես կարծում եմ, մեռնալ ինձ են խնիթ համարում:— Յետոյ: — Յետոյ գիւղացիները մէկը հրաւիրեց նրան մանկ իր հետ զգնիլ տունը մի բաժակ աղաղ խմելու: Նա ընդունեց հրաւերը: Անտեղ գտնվում էր բոլորովին հարբած մի բաղմութիւն: Նա ինքը շատ փոքր խմեց, բայց վճարեց բոլորի համար: Անտեղ ևս սկսեց իր քարոզները գիւղացու բա-րօրութեան մասին և սկսեց բացատրել նրա թշուառութեան պատճառները: Նա խօսում էր տաք և ոգևորված կերպով: Եւ առաջին անգամ զգուշ էր իմ մէջ, թէ ինչ մեծ ներգործութիւն ունի խօսքը ուժը: Բայց գիւղացիները արհամար-հանքով լուռ էին նրան: Մէկը հարցրեց նրանից, թէ զի՞նչ պաշտօն, ինչ աստիճան ունեցաւ, երբ